

# ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՏԱՄՊՈԼՑԻ ՏԱՂԱՍԱՅՐ

(1570)

Նիկողայոս Ստամպոլցի առաջին անգամ ա՛յս տեղ կը ներկայանայ հրատարակին իր քանի մը տաղերով: Եթէ նուազ ալ դնահատուի իր տաղերու արժէքը, բայց հայ գրականութեան պատմութեան համար հեռաքրքրական է իր անձը, որ — սրչափ ինձի ծանօթ է — առաջինը կը հանդիսանայ պոլսահայ գրական ղէմքերու: Կոստանդնուպոլսոյ հայ զաղթականութիւնը շատ հեղինակներ տուած է. անոնց մեծագոյն մասը սակայն, սկսեալ ժէ. դարէն, եղած են եկուսը զաղթականներ, զաւտացիներ: Անգրեւորներէն շատ քիչերը սիրած են գրականութիւնը. իսկ մինչև ժ.Ք. գար սակաւաթիւ անձինք միայն իրրեւ հեղինակներ տեսնուած են հրատարակի վրայ:

Նիկողայոս բնիկ Կոստանդնուպոլսեցի է. իր անուան կից պարծանքով կը կրէ Ստամպոլցի յարջորջանքը: Նա ծնած է ժ.Ձ. զպրուկէսին, ինչպէս հաւանական կ'երեւայ՝ Կ. Պոլսոյ Ղալաթիա թաղամասի մէջ: Իր ծնողաց մասին կը պակսին մեզի տեղեկութիւններ: Շատ զոյգն են մեր ծանօթութիւնները նաեւ իր կենսագրութեան նկատմամբ: Երեսուցէմի վրայ գրած տաղէն կ'իմանանք թէ նա այցելած է Ս. Քաղաքը: Այս ուղևորութիւնը, զոր կատարած է երիտասարդական հասակին, իրեն նպատակ ունեցած է ուխտագնացութիւնը: Երեսուցէմ իր բնակութիւնը եղած է Ս. Յակոբեանց վանքին մէջ: Այստեղ բնոյնած է նա Խոջայ Պալիի թուղթը: Խոջայ Պալի հաւանօրէն այն Կաֆացի վաճառականն է, որուն Ախիջան սրգին Տրապիզոնի մօտերը 1619ին ծովամոյն եղաւ, եւ այս առթիւ Ստեփաննոս թոխաթեցի գրեց միւթիարական խօսքեր աղեխարշ հօրը (1): Իր եւ

Խոջայ Պալիի ծանօթութիւնը մտերմական է. վերջինս իր զովասանական թղթին մէջ կ'անուանէ զնիկողայոս «եղբայր»: Թէ բարեկամական կապը ի՞նչ առթիւ զօղուած է երկու սրբուերու մէջ, մեզի անծանօթ կը մնայ: Նիկողայոս պատասխանած է իր բարեկամի թղթին նոյնպէս զովասանական տողերով: Այս թղթերը գրուած են ստանաւոր չափով եւ ունին «Ի Պալէ առ Նիկողոսի» եւ «Ի Նիկողոսէն Խոջայ Պալիին» սկզբնաղիւր անակապերը:

Երեսուցէմ անցուցած ժամանակը Մղտեսի Նիկողայոս օգտագործած է ծանօթանալու քաղաքին եւ շրջակայքին ուխտավայրերուն: Ի տես անօրինական տեղերու ստացած է իր հնգին նոր տպաւորութիւններ, իր հիացմունքին և բարեպաշտ զգացումներուն արտայայտութիւնն է Երեսուցէմի վրայ յօրինած գովասանութիւնը:

Այն ուխտագնացութիւնը Կ. Պոլսէն Երեսուցէմ կատարած է Նիկողայոս հաւանօրէն 1570ին: Այդ տարի Սեպտեմբեր 9ին կը գրանենք զինքը Կիպրոսի վրայ, ուր ահանատես է այն սրտաճմրիկ տեսարաններուն, որոնք տեղի կ'ունենան Նիկոսիայի մէջ, երբ օսմանեան բանակը կը գրաւէ քաղաքը: Ի՞նչ առթիւ բերած էր զինքը հոտ: Ինձի կ'երեւայ թէ Նիկողայոս գէպի Երեսուցէմ երթին եւ կամ անկէ վերադարձին ժամանակ հանդիպած է Կիպրոս: Թերեւս 1570 Յուլիոս — Սեպտեմբեր ամիսներուն երբ օսմանեան նաւատորմիդը կը յածէր Միջերկրականի վրայ, իր նաւը ժամանակ մը հարկադրուեցաւ սպասել Կիպրոսի առաջ: Քաղաքին գրաւման առթիւ գրած է Նիկողայոս սղբ մը, ուր կը նկարագրէ ահանատեսի գրչով այն արիւնտա տեսարանները, որոնց նշանակ եղաւ քրիստոնեայ բնակչու-

(1) «Բազմիւլէպ», 1922, էջ 164-166:



թիւնը, երբ բարբարոս զօրքը կը խուժէր քաղաքը: Այս միջոցին Նիկողայոս օսմանեան բանակին մէջ էր, քաղաքէն դուրս, իր տաղը կը հաղորդէ մանրամասնութիւններ նաեւ պաշարման հանգամանքներու մասին:

Նիկողայոսի կենսագրութեան այս դժերը պահպանած են մեզի անոր տաղերը: Դժբախտաբար անոնք կը լսեն հաղորդել մեզի թէ հեղինակը ինչ պայմաններու մէջ կը գրանուէր այդ շրջանին, աշխարհական էր թէ եկեղեցական: Տաղերու շունչը, ոճը եւ ինչ ինչ երանգները կը կազմեն մեր մէջ այն համոզումը, թէ նա հետամուտ մըն էր եկեղեցական կոչման, եթէ տակաւին չէր առած բարձր կարգերը, բայց յամենայն դէպս սնած եւ ուսած էր եկեղեցւոյ հովանոցին ներքեւ, թերեւ իրբեւ զպիւր: Կիպրոսի առումէն իր 30 տարի յետոյ Կ. Պոլիս կը պատահինք Նիկողայոս երէցի մը, որ քաղաքին բնիկներէն է, «այլ խառն, իմաստուն եւ բարեւէր»: Իր անձնաւորութեան այս յատկութիւնները կը թելադրեն մեզի նոյնացնել զինքը համանուն եւ համաքաղաքացի տաղասացին հետ:

1605ին Գրիգոր Կամախեցի երբիմէն Կ. Պոլիս կը ժամանէ, Գալաթիայի (Կէօմրիւկի) Ս. Նիկողայոս եկեղեցւոյ քահանաները կը հիւրընկալեն զինքը իրենց մօտ, «եւ անդ էր աւագերէց մի այլ խառն, իմաստուն եւ բարեւէր, սեպհական բնիկ (=Ստամպուլցի)՝ Նիկողայոս անուն, կարի առաւել խանդաղակաթ սիրով ընկալաւ զմեզ», կը գրէ Կամախեցի ժամանակագիրը (էջ 70): Քիչ յետոյ երբ Երուսաղէմ պիտի մեկնէր Գրիգոր, ուզեց իրեն հետ ուղեկից սեննալ սարիչ հոգեւորականներ եւս, բայց անոնց չքաւորութիւնը չի տար համարձակութիւն կոխել այս հեռաւոր բազմաձայնք ճանապարհը: Գրիգոր Կամախեցի կը միջնորդէ անոնց համար Աւագերէցի մօտ, «եւ ես աղաչեցի զաւագերէցն մեծ աւագ եկեղեցւոյն սուրբ Նիկողայոսի՝ զարբասէր քահանայն զտէր Նիկողայոսն վասն Պարոն Զօր չքաւորութեան եւ զպիտոյն ամենայն որ վասն Ս. Երուսաղէմայ: Նա այս տէր Նիկողայոսս, որ յոյժ ջերմեռանդ սիրով կու զթայր ի վերայ մեր եւ նոցա, պատասխանի ետ մեզ եւ ասաց թէ... նա ես այլ կամ ունիմ որ կողակցոյս երթալոյ յերուսաղէմ, երբ յորժամ չլինի զոցա բաւական պաշարն ճանապարհի, նա ես տաց զիմ թողակ պաշարն ճա-

նապարհին Ս. Երուսաղէմայ»: Ուխտաւորները ճանապարհ կ'ելլեն, անոնց թուին մէջ չեն տեսնուիր աւագերէցն եւ իր կողակիցը (էջ 93): Քրիստոնէական եղբայրատիրութեամբ հրաժարեցաւ նա իր սրտի փափագէն, խնայած միջոցներովը հարթեց ճանապարհը ուրիշներու առաջ: Այսպէս թէ եւ չյաջողեցաւ իրեն այս անգամ բնտանիքին հետ այցելել Երուսաղէմ, բայց նա մղտեսի էր արդէն, Կերլայի տաղարանը, որ գրուած է 1605ին, այդ թուին մղտեսի գիտէ զինքը:

1605ին Նիկողայոս աւագերէց այլ խառն էր արդէն, մասն հաւանօրէն այս թուականէն ոչ շատ ուշ այցելեց իրեն:



ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անոնք բարձր արուեստի ստեղծագործութիւններ չեն, մեր «միջնադարեան» անուանած գրականութեան մէջ կարող են սակայն փոքրիկ տեղ մը գրաւել: Իրենց պարզութեան մէջ ալ ունին մերթ սիրուն հնչիւններ, որոնց սենկորութիւնը հաճելի է, երբեմն նաեւ յուզիչ: Նիկողայոս իր Կիպրոսի առման նուիրած ողբին մէջ կը յայտնաբերէ ազգեցիկ ոճ մը նկարագրելու ցաւալի տեսարաններ, եւ իր զովասանութիւնը Ս. Տեղեաց կը ձգտի յտուջ բերել ոգևորութիւն: Իր տաղերու հարազատութեան համար յայտարար նշան կրնայ նկատուիլ միաձեւ շափր, որ 4—4 հատուածով է ամենուրեք, խոտարումները պէտք է վերադրել ընդօրինակողներու անձնատութեան:

Նիկողայոսի գրչէն ծանօթ են ինձ հետեւեալ տաղերը.

1. Ողբ Ղարկողի կղււղիս. — Սուլթան Սելիմի (1566—1574) սիրելագոյն ծրարիրն էր, արդէն գահ բարձրանալէ առաջ, խլել վեհնատիկի Հասարակապետութեան ձեռքէն Կիպրոսը, ուր ծածանած էր երբեմն մահմեդական զրօշը: Իր ախորժակը հրահրեցին Փիալա եւ Լալա Մուսթաֆա վէզիրները, անոր սուրբ նկարագիր տուաւ Էրուսուղ մուֆտին: Հակառակ ամէն իրաւունքի՝ 1570ին հրատարակուեցաւ պատերազմ: Կիպրոսի վրայ արշաւող բանակներուն հրամանատարներ նշանակուեցան Լալա Մուսթաֆա փաշա եւ Փիալա փաշա, առաջինին յանձնուեցաւ ցամաքային ու-



ժին հրամանատարութիւնը, երկրորդը պիտի վարէր ծովային բանակը: Նոյն տարւոյն Յունիսի վերջերք օսմանեան բանակը անարգել Կիպրոս ցամաք ելաւ: Պատերազմական խորհրդի մէջ կ'առաջարկէր Փիալա՝ նախ Թամազասն գրաւել, բայց յաղթեց Մուսթաֆայի ծրագիրը, պիտի պաշարուէր Նիկոսիան (=Լեւկոսիա, Լէվրոշա): Օգոստոս 1ին թրքական բանակը երեւցաւ Նիկոսիայի պարիսպներու առաջ: Զօրահանգէսը ցայց առաւ օսմանեան բանակի սյօր՝ 50,000 հեռեւեակագոր եւ 2,500 ձիաւոր, խառնազանճին հետ ի միասին անոնց թիւը կը հասնէր 100,000ի: Ասոնց ղէմ ունէին Բաալպիք ընդամէնը 10 (100) հեռեւեակ եւ աչրուձի, որոնք ամբացած էին քաղաքին բերդերուն մէջ: Օգոստոս 15ին նաւերէն դուրս հանուեցան ծանր թնդանօթները որոնք եօթը եօթը ուղղուեցան քաղաքի եօթը ամբուլթիւններուն ղէմ: Թրքական զօրասիւնները՝ ստուարացած 20,000 նոր հասած զինուորներով՝ Սեպտեմբեր 9ին, շարաթ առաւօտեան աչլեւայ ուղղութիւններէ զրո՛ս տաին ամբուլթիւններուն վրայ: Անոնցմէ շորսը գրաւուեցաւ: «Բնակիչները ողորմութիւն հայցելով ինկան թուրքերու սաքը, բայց անոնք անզթօրէն սուրով մաշեցին զամէնքը»: Բաալպիական վերին հրամանատարը՝ Նիկոլօ Գանդոլօ, որ իր անհզութեամբ հեշտացուցած էր թուրք բանակին Կիպրոս ցամաք ելլելը, այժմ ամբացած էր միւս իշխաններուն հետ պալատին մէջ: Մուսթաֆա փաշա իր թնդանօթով կը սպանոնար խորակել ընդդիմադրութիւնը: Փաշայի կողմէն կրօնաւոր մը զրկուեցաւ իաւրական հրամանատարին, յորդորելու որ ինքնակամ անձնատար ըլլայ, կեանքի ապահովութեամբ: Վենետացիք հաղիւ թէ վար զրած էին ղէնքերը եւ կրօնատարը դուրս ելած էր ամբուլթենէն, եւ ահա խուժեցին թուրքերը կատաղարար անպաշտպան քաղաքը եւ անխնայ ամէն ինչ շարեցին կոտորեցին: Հրամանատարն Գանդոլօ զո՛ւ եղաւ իր պատերազմական իրաց անհմատութեան եւ անհզութեան: Այժմ սկսաւ բարբառներէն գրաւուած քաղաքին կոտորածը: Շատ կիներ նեաեցին իրենք զիրենք զահափէժ տանիքներէն վար. շատերը խեղզաման սպաննեցին իրենց ազջիկները, որպէս զի անոնք շենթարկուին ամօթալից պղծութեան, ոմանք նախ կը մխէին սուրը իրենց զատակ-

ներուն սիրար՝ բեկով «Գու սորուկը պիտի դառնաս մեր թշնամիներուն», եւ ապա անձնաման կ'ըլլային: Քսան հազար նախճիր պահանջեց նուաճողներու արեան ծարարը, նոյնքան թիւ մ'ալ իբրեւ սորուկ եւ սորկուճի զեբի վարուեցան: Աւթ օր մաշեցաւ քաղաքը սրով եւ յափշտակութեամբ: Բայց աւարտուներն աւարի հարուստ բաժնէ մը վրիպեցուց կնաջ մը հերոսական զործը: Թէեւ պատմական ղէմ ղէ աւանդած մեզի անոր ոչ անունն եւ թիւնը չէ աւանդած մեզի անոր ոչ անունն եւ ոչ ալ ազգը՝ վենետացի՞ էր թէ Յոյն կամ Հայ, սակայն զործը եթէ ոչ իբրեւ օրինակ քրիստոնէական սիրոյ, բայց իբրեւ օրինակ հայրենասիրութեան, եւ անձը՝ իբրեւ ազնիւ մը եւ հզօր մը, կ'ապրին պատմութեան մէջ: Մեծ վէզիր Մահմէտ փաշայի նաւը եւ երկու ուրիշ նաւեր, սկաղծուն թանկագին աւարով, կը սպասէին նուամատոյցին մէջ՝ պատրաստ ճանապարհի, բեռնաւորուած էին արծաթով, ոսկով եւ ազնուագոր սարուկներով, եւ ահա վրէժխնդիր կիներ կրակ կուտայ նախն, մեծ վէզիրին վաստակներեակը օզը կ'ըլլէ, կ'այրին նաեւ մերձակայ երկու նաւերը, եւ անոնց հետ հազար սարկուճիներ, սակաւաթիւ նաւատիներ միայն մագազուր կ'ազատին կրակի մահէն (հմեա, Յ. Համմէր, Պատմութիւն Օսմանեան Պետութեան, հատոր Բ., Պետա, 1834, էջ 400-418):

Գծբախտարար մեր երգիչին անձանօթ մնացած է կնաջ հերոսական արարքը, բայց ս'ըջափ միաբան են աղէտին նկարագրութիւնները արտաքին աղբիւրներու հետ: Թրքական խժգժութիւններու ոչ առաջին եւ ոչ վերջին պատկերն է այս պատմութեան էջերը աւլցուն են այսպիսի անարաններով: Նիկոլայոսի Ողբը կը մնայ պատմական յիշատակարան մը այդ բարբարոս անպարտանութիւններուն:

Ողբէս միակ օրինակ ծանօթ է ինձ Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի թ. 1002 Ձեռագրին մէջ, գրուած 1654ին (թղ. 71բ-71ա): Ինչ ինչ տողերու անհամաշարժութիւնը բաղձալի կ'ընէ երկրորդ օրինակի մը յայտնութիւնը:

2. Տաղ ի վերայ երուսաղէմի. — Գրած է Երուսաղէմ, հաւանօրէն Կիպրոսի սղբէն յետոյ: Հրատարակութեանս համար բնագիր առած եմ Վիեննայի թ. 745, թղ. 210ա-211բ.



որ նոր օրինակութիւն մըն է Կերլա հայաբա-  
ղարի Տաղարանին, գրուած 1605ին:

3. Տիւբինգէնի հայերէն ձեռագիրներու  
թ. 102 կ'ամփոփէ իր մէջ հեռեւեալ տաղերը,  
որո կ'ուզեմ վերագրել Նիկողայոս Ստամ-  
պոլցիին:

ա. Գովասանք (թղ. 75ա).

Ի յանարժան եւ անպիտան  
որ այս անուն (1) կոչի անուան,  
ուսման գրրոցն եմ խիստ ունայն,  
մրտօք տըկար, յիմար 'ւ անբան...

Տուներու սկզբնակապ գրերն են. «Ի Նիկո-  
ղոսէն Խոջայ Պալիին»:

բ. Գովասանք (թղ. 76ա).

Նորոգողին Տեառն ցիտուսի,  
փառք եւ պատիւ անլըռելի,  
որ վարդարեաց վքեղ ի մարմնի,  
տիպ գեղեցիկ եւ նազելի...

Տուներու սկզբնակապ գրերը կը հիւսեն  
«Նիկողոս»:

գ. Գովասանք (թղ. 76բ—79ա).

Աղբերդ յորդառաա, բըխեալ յեզեմայ, գե-  
տոց զանազան...

Չափը Նիկողայոսի սովորական չափը չէ.  
բովանդակութիւնը հոգեւորականի մը գովա-  
սանութիւնն է. թերեւս Խոջայ Պալիէն նուիր-  
ուած Նիկողայոսին: Ասոր կը յաջորդէ (թղ.  
79ա—80ա) տաղ մը, որ ուղղուած է Երուսա-  
ղէմ Ս. Յակոբեանց վանքը նստող Նիկողա-  
յոսի մը, այսպիսի սկզբնաւորութեամբ.

Ի մխրամած գարշապարի, եղբայր գրեմ  
բան կարօտի...

Տուներու սկզբնագրերը կը կապեն. «Ի  
Պալէ առ Նիկողոսի»:

Տաղերու այս խումբը ծանօթ է ինձի նին-  
կի ցուցակէն. Verzeichnis der armenischen  
Handschriften der Königlichen Universi-  
tätsbibliothek zu Tübingen. von F. W. Finck  
und L. Gjandschezian, Tübingen, 1907, էջ  
164—165:

Նիկողայոս Ստամպոլցույ տաղերուն հան-  
դիպած եմ նաեւ Էջմիածնի ձեռագիրներու  
մէջ:

վիեննա

Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿՐՆԵԱՆ

\* \* \*

## ՈՂԲ ԴՊՐԿԹՅԻ (1) ԿՂԶՈՅՆ ԱՍԱՑԵԱԼ Է

Հաղարն էր Հայոց թրվին եւ իննեւտան (2) աւերողին.

Կիպրոս կղզւոյն ցասուճն եկեր, վասըն ճեղացն որ գործէին:

Թագաւորն ճաճկաց ազգին, սուլթան Սէլիմն էր ի թախտին.

Չար խորհեցաւ Կրպրայ քաղքին, վասըն ճեղաց որ գործէին:

Հրածոյեց իր վայրնուն (3), ինձ պիտի Կիպրոս կղզին.

Ետարխ առեւք զատրըղանին, վասըն ճեղաց որ գործէին:

Վազիրնուն խիստ անողորմն, Մուստաֆայ վաշայն անուանէին,

Ղատրըղան ունէր փախտն. վասըն ճեղաց որ գործէին:

(1) Ձեռագիր՝ գպրկրօվի:

(2) Չ. ԺԹ. էր:

(3) Չ. վազիրներուն: